ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

08.04.2025 19:51

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 08.04.2025 թվականի թիվ 1/2-Լ որոշմամբ հաստատվել են որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցերը։

1. ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրները 2025 թվականի առաջին կիսամյակի որակավորման քննություններին մասնակցելու համար դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերը կարող են ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատ **2025թ. ապրիլի 9-ից մինչև 2025թ. ապրիլի 20-ը** (ներառյալ) ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն (աշխատանքային օրերին)։

Փաստաթղթերի ցանկը սահմանված է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 30-րդ կետում (www.advocates.am, Պալատ -> Որակավորման հանձնաժողով)։

2. «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձինք 2025 թվականի առաջին կիսամյակի որակավորման քննություններին մասնակցելու համար դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերը կարող են ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատ **2025թ. ապրիլի 9-ից մինչև 2025թ. ապրիլի 20-ը** (ներառյալ) ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն (աշխատանքային օրերին)։

Փաստաթղթերի ցանկը սահմանված է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 31-րդ կամ 32-րդ կետում (www.advocates.am, Պալատ -> Որակավորման հանձնաժողով)։

- ***Բեռնել ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրների որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը***

- ***Բեռնել «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը***

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })